


# Ֆենազաքին (Դեմիտան)



**Քիմիական անունը՝** 4-տրի-բուրիլֆենեթիլ քինազոլին-4-իլ-երթեր,

3-[2-[4-(1,1-դիմեթիլէթիլ) ֆենիլ] էթօքսի քինազոլին

**Այլ անուններ՝** ֆենազաքին, ֆենազաքինա, քինազոլին

**Միացությունը՝** NNOCH<sub>3</sub>C H<sub>3</sub>CH<sub>3</sub>

**Գրանցման համարը (ըստ Քիմիկատների մասին տեղեկատվական ծառայության)**

**(CAS)՝** 120928-09-8

**Թունաքիմիկատի տեսակը՝** տգասպան և միջատասպան

## Բնութագիրը

Թունաքիմիկատը պատկանում է քիմիկատների քինազոլինների դասին: Նախատեսված է միջատների և տզերի վերահսկման համար: Կոնտակտային և համակարգային թունաքիմիկատ է: Խախտում է միջատների միտոքոնդրիումի կենսաքիմիան:

## Օգտագործումը

Այս համեմատաբար նոր քիմիկատը թույլատրվում է օգտագործել ցիտրուսային մրգերի, խնձորի ու տանձի մշակման համար: Քիմիկատը 2005 թ.-ին հավանության է արժանացել շատ երկրների կողմից, որոնց 80% -ը կազմում են եվրոպական երկրները (Ադրբեջան, Բուլղարիա, Չիլի, Չինաստան, Խորվաթիա, Չեխիայի Հանրապետություն, Ֆրանսիա, Գերմանիա, Հունաստան, Հունգարիա, Իտալիա, Կորեա, Մարոկկո, Պերու, Պորտուգալիա, Ռուսաստան, Սլովակիա, Հարավային Աֆրիկա, Իսպանիա, Թուրքիա, Միացյալ Թագավորություն, Ուզբեկստան և Հարավսլավիա): Միացյալ Նահանգներում Թունաքիմիկատների հարցերով խորհրդատվական կոմիտեն 1996 թ.-ին իր տարեկան հաշվետվությունում հավանություն է տվել քիմիկատի օգտագործմանը:

Այս քիմիկատն արտադրողները, ներկայացնելով այն Մատադոր առևտրային անվանմամբ, հույս ունեին արտադրանքը շուկա հանել՝ Վնասատուների ինտեգրացված կառավարման (ՎԻԿ) համակարգերում, գլխավորապես խնձորի այգիներում օգտագործելու համար: Այնուամենայնիվ, Թունաքիմիկատների հարցերով խորհրդատվական կոմիտեն նշված արտադրանքը գնահատել է խիստ վտանգավոր՝ ձկների կամ ջրային այլ կենդանիների համար, ինչպես նաև հոսանքի ուղղությամբ շարժվող, ազատ լողացող անողնաշարավորների համար: Քիմիկատը նախատեսված է նաև բանջարեղենի, լոբու, բամբակի, ընկույզի, ձիթապտղի և ծաղիկների մշակման համար:

## Հնարավոր վտանգները

### Սուր ազդեցություն

Ֆենազաքինը խիստ թունավոր է, երբ այն մկների օրգանիզմ է թափանցում բերանի

միջոցով: Այլ ճանապարհով սուր թունավորման վերաբերյալ տվյալներ չկան:

**Կրկնակի ազդեցություն**

Մկների, համստերների (գերմանամուկ) և շների վրա կատարած փորձը ցույց է տալիս, որ օրալ ճանապարհով կրկնակի չափաբաժին ընդունելու դեպքում, զգալիորեն նվազում է այդ կենդանիների քաշը և սննդի ընդունման չափը:

Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) գնահատման, թունաքիմիկատը պատկանում է չափավոր վտանգավոր քիմիկատների դասին:

**Թունայնությունը**

Թունավոր նյութ է: Ներշնչման, կուլ տալու և մաշկի հետ շփման դեպքում, կարող է առաջացնել ծանր հետևանքներ կամ նույնիսկ՝ մահ: Ներշնչումից կամ մաշկի հետ շփումից առաջացած հետևանքները կարող են ավելի ուշ դրսևորվել: Հավված նյութը մաշկի վրա և աչքերի մեջ թափվելու դեպքում, կարող է առաջացնել այրվածքներ: Ոչ թիրախային հողվածոտանիների վրա ֆենազաքինի ազդեցության վերաբերյալ տվյալները ցույց են տալիս, որ այս թունաքիմիկատը խիստ թունավոր է գիշատիչ տզերի ու զատիկների համար, նույնիսկ՝ առաջարկված չափաբաժնից ավելի փոքր չափաբաժին կիրառելու դեպքում: Ապացուցված է, որ ՎԻԿ-ի դեպքում այս թունաքիմիկատի կիրառությունը այնքան էլ նպատակահարմար չէ:

Չեխիայի Հանրապետությունում, թեև այս քիմիկատը թույլատրված է օգտագործել խնձորի մշակման համար, այն խորհուրդ չի տրվում օգտագործել այն խնձորների համար, որոնք նախատեսված են մանկական կերի արտադրության համար: Այս մասին որոշումը միրգ և բանջարեղեն արտադրող միություններն ընդունել են 2006 թ.-ին:

**Սուր թունավորության սահմանային մեծությունները**

Առնետ (բերանի միջոցով)՝ մահացու չափաքանակը (LD50) > 300 մգ/կգ, առնետ (ներշնչելիս)՝ LC50 1.1 մգ/մ<sup>3</sup>, ճագար (մաշկային շփման դեպքում)՝ LD50 > 5000 մգ/կգ, ձուկ՝ LC50, 96 ժամ, 220 մկգ/լ, անողնաշարավորներ՝ EC50, 48 ժամ, 2,3 մկգ/լ, ջրիմուռներ՝ EC50, 72 ժամ, 78 մկգ/լ, թռչուններ՝ 500 մգ/կգ <LD50<2000 մգ/կգ, մեղուներ՝ LD50> 100 մկգ /լ/մեղու, 48 ժամ

**Բնապահպանական հետևանքներ**

Շատ թունավոր է ձկների, անողնաշարավորների և ջրային բույսերի համար:

Համեմատաբար անվնաս է մեղուների համար:

<<Անտիդոթ Յուրոփ>>-ի կողմից (որն այլընտրանքային մեթոդ է թունաբանության ստանդարտ մեթոդների նկատմամբ և ուսումնասիրում է, թե ինչպես են քիմիկատներն ազդում մարդու բջիջների վրա) քիմիական թունավորության վերաբերյալ տրված գիտական ուսումնասիրության արդյունքները հետևյալն են՝ լյարդի բջիջներում ուժեղ ճնշման է ենթարկվել 22 գեն, նյարդային բջիջներում զգալի չափով ճնշվել է 11 գեն՝ որն ազդել է լյարդի և նյարդային բջիջների գաղութներում հետազոտվող ֆունկցիաների վրա:

**Քաղցկեղածին հատկությունը:** Մարդկանց մոտ քաղցկեղ չի առաջացնում:

**Մուտագենեզ:** Մուտագեն հատկությամբ օժտված չէ:

**Բիոակտիվություն:** Օժտված չէ կուտակման հատկությամբ:

**Տեղափոխվելու հասկությունը:** Հողում ներծծվում է և օժտված է ցածր միգրացիայի հասկությամբ:

**Կայունությունը և քայքայվելու ունակությունը**

Ակնկալվում է, որ ֆենազաքինը ջրային միջավայրի վրա կարող է երկարատև ազդեցություն գործել: Այս քիմիկատը ջրում ամբողջությամբ լուծվում է: Հողում վերջինիս կիսատրոհման տևողությունը կախված է հողի տեսակից և տարբեր պայմաններից: Կյանքի տևողությունը տատանվում է 18-112 օր: Հողում ամուր կապվում է և խիստ իմուն է ալկալահանման և լվացահանման նկատմամբ:

**Սահմանային քանակությունները**

Ըստ Շրջակա միջավայրի պաշտպանության վարչության (EPA)՝ խնձոր և տանձ՝ 0,2 մգ/կգ, ցիտրուսային մրգեր՝ 0,5 մգ/կգ, ընկույզ՝ 0,01 մգ/կգ, այլ մրգեր և բանջարեղեն՝ 0,01 – 0,1 մգ/կգ

Թունաքիմիկատի մնացորդային սահմանային քանակը բուսական ծագում ունեցող սննդամթերքներում (օր.՝ խաղող, տանձ, խնձոր) 0,1 մգ/կգ է, կենդանական ծագում ունեցող սննդամթերքներում նշված մեծությունների մասին տվյալներ չկան:

Օրգանիզմի համար օրական թույլատրելի չափաբաժինը (ADI) 0,005 մգ/կգ է:

**Վտանգավորության նշանը՝** Xn (վնասակար է)

**Ռիսկերը**

Վնասակար է՝ կուլ տալու դեպքում:

Շատ թունավոր է ջրային օրգանիզմների համար: Ջրային միջավայրում կարող է առաջացնել երկարատև բացասական հետևանքներ:

**Խորհուրդներ՝ անվտանգության ապահովման նպատակով**

Պահեք երեխաների համար անհասանելի տեղում:

Պահեք սննդամթերքից, ըմպելիքներից և կենդանիների կերից հեռու վայրերում:

Նյութն օգտագործելիս, չի կարելի ուտել, խմել կամ ծխել:

Աերոզոլը չի կարելի շնչել:

Աչքի մեջ թափվելու դեպքում, անմիջապես լվացեք առատ ջրով և դիմեք բժշկի օգնությանը:

Հազեք հարմար ձեռնոցներ:

Պատահարի կամ վատ ինքնազգացողության դեպքում, անմիջապես դիմեք բժշկի օգնությանը (հնարավորության դեպքում, ցույց տվեք պիտակը):

Օգտագործեք համապատասխան տարա՝ շրջակա միջավայրի աղտոտումից խուսափելու համար:

**Հղումներ**

<http://www.epa.gov/opprd001/factsheets/fenazaquin.pdf>

[http://www.pesticideinfo.org/Detail\\_Chemical.jsp?Rec\\_Id=PC36759](http://www.pesticideinfo.org/Detail_Chemical.jsp?Rec_Id=PC36759)

[http://www.chemicalbook.com/ProductMSDSDetailCB2350051\\_EN.htm](http://www.chemicalbook.com/ProductMSDSDetailCB2350051_EN.htm)

<http://www.pan-uk.org/pestnews/Issue/pn37/pn37p19d.htm>

<http://www.pronachem.cz/m/Magus%20200%20SC.pdf>

[http://antidote-europe.org/substances\\_gb.htm](http://antidote-europe.org/substances_gb.htm)



*Տեղեկատվությունը թարգմանվել է Եվրամիության ֆինանսական աջակցությամբ: Սույնի բովանդակությունը պատկանում է Արմիկա ասոցիացիային և «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ին և չի կարող դիտվել որպես Եվրամիության դիրքորոշման արտացոլում:*